Երկիր Ծիրանի


Վանաձորի քաղաքապետ

Մամիկոն Ասլանյանին

«Երկիր Ծիրանի» կուսակցության անդամ

Մարինա Խաչատրյանից

Հեռ՝ +374.98.11.04.81

+374.55.40.39.00

Էլ. փոստ՝ yerkirtsiranipartyinfo@gmail.com

yerkirtsiraniparty@gmail.com


05.05.2018թ.

# ԴԻՄՈՒՄ
## ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
## ԻՐԱԶԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ իրազեկում ենք լիազոր մարմնին, որ 2018 թվականի հունիսի 1-ից մինչև հունիսի 4-ը ներառյալ Վանաձոր քաղաքի Արցախի պուրակում Զարուհի Փոստանջյանը նախատեսում է անցկացնել հավաք և Արցախի պուրակից երթ, որը նշված օրերին սկսվելու է ժամը 11:00–ին և ավարտվելու է ժամը 23:00-ին:

Հավաքի նպատակն է բողոք ընդդեմ բռնակալության և շուրջ 25-ամյա վաղեմության բռնությունների:

Կարգադրիչների մոտավոր թիվը 5-ն է, իսկ հավաքի մասնակիցների թիվը՝ շուրջ 5000: Երթի երթուղին է՝ Արցախի պուրակ-Տիգրան Մեծի փողոց-Թումանյան փողոց-Գր. Լուսավորչի փողոց-Հայքի հրապարակ-Տիգրան Մեծի փողոց-Արցախի պուրակ: Երթը սկսվելու է 11:00-ին և ավարտվելու է 23:00-ին:


ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«07» 05 2018թ.
Մուտք N 079 Գործ N 13.

Հավաքի և երթի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցներն են՝ պաստառներ, բարձրախոսներ, դրոշակներ, թռուցիկներ:

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ խնդրում եմ պետության կողմից ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքի և երթի բնականոն ու խաղաղ ընթացքն ապահովելու նպատակով:

Կից ներկայացվում է՝

- Հավաքի կազմակերպչի անձնագրի պատճենը (Մարինա Խաչատրյան)
- Հավաքի ղեկավարի անձնագրի պատճենը (Զարուհի Փոստանջյան)

**Դիմող՝ Մարինա Խաչատրյան**

**«Երկիր Ծիրանի» կուսակցության անդամ**

«Երկիր Ծիրանի» կուսակցություն - Մաշտոցի 33/1 առաջին տարածք
0002 Երևան, Հայաստանի Հանրապետություն
yerkirtsiraniparty@gmail.com - +37493806690 - www.yerkirtsirani.am